Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 19.10.2022թ. չորեքշաբթի թիվ 44 (1069)

Ներուժ



Վերջին տարիներին հայկական կամ հայաստանյան **գիտության** զարգացման խնդիրները դարձել են հասարակական լայն քննարկման թեմաներ: Բայց որքան հրատապ է դիտվում մեզանում գիտության զարգացմանը ըստ ամենայնի **նպաստելու** անհրաժեշտությունը, նույնքան էլ, կարծես թե, հետածգվում են **կազմակերպական** գործնական քայլերը (բացառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, ուրում վերջին տարիներին ապահովել ենք հսկայական դրական տեղաշարժեր)... Բնավ նկատի չունենք միայն այն, ինչը կարող են անել **Կառավարությունը**, **Նախարարությունը**, **Ակադեմիան**... Գիտությունը համաժողովրդական՝ սիրո կարիքն ունի, ինչպես հոգեւոր գործունեության մյուս ոլորտները եւս: Հասարակությունը պիտի գիտակցի, որ **շուկայական հարաբերություններում** (իսկ, ուզենք, թե չուզենք, աշխարհն առայժմ զարգանում է ըստ դրանց) մրցունակ լինելու համար պիտի **ներդնել համապատասխան կապիտալ** եւ ունենալ **համապատասխան ապրանք**: Որքան էլ օտարները ներդրումներ կատարեն (իսկ դրանք «ձեռքի հետ» ֆինանսական խնդիրներ լուծելուց բացի՝ քողարկված, երբեմն էլ բացահայտ քաղաքական շահեր են հետապնդում) եւ, առաջին հայացքից, նպաստեն աշխատատեղեր ապահովելու եւ տնտեսական ինչ-ինչ աշխուժացում առաջացնելու գործին, միեւնույնն է, **երկրի տնտեսությունը** կարող է զարգանալ միայն **երկրի արտադրանքով**... **Մրցունակ** արտադրություններ հիմնելու եւ զարգացնելու համար մրցունակ **տեխնոլոգիաներ** են հարկավոր. ասել է թե՝ **գիտատեխնիկական մտքի վերելք**... Մեր իսկ տնտեսության մեջ **մեր** ներդնելիք հիմնական կապիտալը պիտի լինի մեր **գիտական ներուժը**, եւ մեր մրցունակ ապրանքը՝ մեր **գիտական մտքի արդյունքը** կամ նրա շնորհիվ ստեղծվածը:

Պատկերացրեք մի պահ, որ Հայաստանն ունի **Թեւոսյանի** պես նախարար (խորհրդային մետալուրգիան զարգացավ նրա շնորհիվ), **Միկոյանի** պես ինքնաթիռաշինարար (ավելի լավ ռազմական օդանավեր, քան նրա ստեղծածները, Ռուսաստանը դեռ երկար տարիներ թերեւս չկարողանա ունենալ), **Ալիխանյան** եղբայրների պես ֆիզիկոսներ (ու դեռ քա՜նի-քա՜նի հայազգի գիտնականների՝ ռուսական լաբորատորիաներում կատարած աշխատանքները դեռեւս մնում են չգաղտնազերծված), որոնց մտքի արգասիքը ծառայում է սեփական երկրին... Եթե համատարած վախի պայմաններում հայ գիտական միտքը այդչափ պտուղներ է տվել, ապա որքան ավելի կարող է ծաղկել անկախությունը վերականգնած Հայրենիքում... Այստեղ չմոռանանք նշել նաեւ աշխարհի գրեթե բոլոր երկրներում այսօր գործող աշխարհահռչակ բազմաթիվ հայ գիտնականներին՝ ընդհուպ մինչեւ բժշկագիտության ոլորտում 2021 թ. Նոբելյան մրցանակակիր **Արտեմ Փաթափությանը**...

Մնում է միայն, որ Հայրենիքը կարողանա անհրաժեշտ **ոգեւորությունը** եւ **բարոյական մթնոլորտը** ապահովել: Ժամանակը չէ՞, որ մեր գործարարները ներդրումներ կատարեն ոչ թե այս կամ այն սրճարանը, խաղատունը, վաճառասրահը, հյուրանոցը կառուցելու (որոնցից ակնկալում են արագ փոխհատուցվող եկամուտներ), այլ գիտատեխնիկական որեւէ լաբորատորիա, որեւէ մի փորձ կամ փորձարկում ֆինանսավորելու ուղղությամբ... Այս դեպքում նրանց ներդրումները կփոխհատուցվեն ոչ անմիջապես, այլ՝ ժամանակ անց, սակայն կապահովեն տասնապատիկ եկամուտներ, եւ տասնապատիկ կհզորանա երկիրը... Սա ռոմանտիկա չէ, ոչ էլ սոսկ երեւակայություն, նույնքան իրական է, որքան այն փաստը, որ **տեղեկատվական տեխնոլոգիաների** համաշխարհային պատմության մեջ շուրջ **500** կարեւորագույն հայտնագործություն ու նորամուծություն կատարել են հա՛յ գիտնականները... Ընթերցողը կարող է մտաբերել տասնյակ, հարյուրավոր հին ու նոր այլ փաստեր...

Մեզանում գիտությունը հրաշքներ կարող է գործել, ճիշտ այնպես, ինչպես որ հայ գիտնականները բոլոր ժամանակներում: Միայն թե կրկին պետք է **սիրել** գիտությունը եւ գիտնականին, այնպես, ինչպես սիրում էինք **Վիկտոր Համբարձումյանին, Պարիս Հերունուն, Գրգոր Գյուրզադյանին** եւ մյուսներին. ազգովի՛: Գիտությունը կարող է ծաղկել նաեւ առանց հսկայական ֆինասնական ներդրումների: Դրանք անհրաժեշտ, բայց ոչ միակ պարտադիր պայմաններն են: Գիտությունը դյուրությամբ է ծաղկում, երբ արմատակալում է դպրոցում... **Աշակերտակա՛ն գիտությունը**, գիտության նկատմամբ **աշակերտական սերը եւ հետաքրքրասիրությունը** լավագույն ներդրումները կարող են լինել գիտության զարգացման համար: **Մեկ ուսուցիչը կարող է բարոյապես ծնել տասնյակ գիտնականի**: Գիտությունը կրկին պետք է մտնի դպրոց ու բուհ: Ու գիտական խոշորագույն հայտնագործությունները, թեեւ դեռես երազանքի տեսքով, պիտի հղացվեն հենց աշակերտական նստարանին: Գիտությունը՝ դպրոցով, դպրոցը գիտությամբ պիտի կրկին ձեռք բերեն այն որակները, որ ունեցել ենք, որ կարող ենք ունենալ, որ արժանի ենք ունենալու:

Գ. Մ.

Նախարարի նախաձեռնությամբ

«Բոլորիս նպատակը նույնն է՝ ապահովել որակյալ կրթություն»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** եւ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել են ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանի,** ԵՊՀ նորագույն գրականության ամբիոնի պատվավոր վարիչ **Վազգեն Գաբրիելյանի,** ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի պատվավոր վարիչ **Սամվել Մուրադյանի,** ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի քիմիայի ամբիոնի վարիչ **Լիդա Սահակյանի,** ԳԱԱ ՊԻ առաջատար գիտաշխատող **Դավիթ Գասպարյանի** եւ Շիրակի մարզի Հոռոմի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի **Նարինե Կարախանյանի** հետ:

շարունակությունը՝ էջ 3

Հանրային քննարկումներ

«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի, ինչպես նաեւ հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերը:

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում կլուծվեն ՄԿՈՒ ոլորտում առկա մի շարք հիմնարար խնդիրներ, ինչը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների եւ հմտությունների ձեւավորմանը, գործատուների ներգրավմանը եւ սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը եւ որակավորումների փոխճանաչմանը:

շարունակությունը՝ էջ 2

Դպրոցական արձակուրդների մասին

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված՝ հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով սահմանվել են դպրոցականների արձակուրդների հետեւյալ օրերը.

2022-2023 ուսումնական տարում **3-12-րդ դասարանների** սովորողներին տրվում են արձակուրդներ.

- ***աշնանային***՝ *2022 թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ,*
- ***ձմեռային***՝ *2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 8-ը ներառյալ,*
- ***գարնանային***՝ *2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

Առաջին դասարանցիներին արձակուրդներ տրվում են.

- ***աշնանային***՝ *2022 թ. հոկտեմբերի 17-ից 30-ը ներառյալ,*
- ***ձմեռային***՝ *2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 22-ը ներառյալ,*
- ***գարնանային***՝ *2023 թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

Երկրորդ դասարանցիներին արձակուրդներ տրվում են.

- ***աշնանային***՝ *2022 թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ,*
- ***ձմեռային***՝ *2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 22-ը ներառյալ,*
- ***գարնանային***՝ *2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:*

ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Այդ փոփոխությունները կարող է կատարել նաեւ ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու մասին լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը

սկիզբը՝ էջ 1

Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունները ներառում են հետեւյալ առանցքային ուղղությունները՝

ՄԿՈՒ օրենքում օգտագործվող հասկացությունների եւ դրանց սահմանումների ներդաշնակեցում

Նախագծով ոչ միայն ճշգրտվել եւ ներդաշնակեցվել են օգտագործվող սահմանումները, այլեւ տրվել են ՄԿՈՒ համակարգում լայնորեն կիրառող մի շարք այլ հասկացությունների սահմանումներ, ինչպիսիք են՝ ԱՀՈՒ, սոցիալական գործընկերություն, մասնագիտական ուսուցման հրահանգիչ, վարպետ, ուսումնական մոդուլ եւ այլն: Վերացվել է գործող օրենքի տարբերակումը մասնագիտական ուսումնական հաստատությունների երկու տեսակների միջեւ՝ *«քոլեջ»* եւ *«ուսումնարան»*, որը գործնական որեւէ խնդիր չէր լուծում: Փոխարենը՝ մասնագիտական կրթության համակարգում սահմանվել է ուսհաստատության միայն *«քոլեջ»* տեսակը՝ տարբերակելով վերջիններիս կողմից ըստ լիցենզիայի իրականացվող կրթական ծրագրերի մակարդակները՝ արհեստագործական եւ միջին մասնագիտական:

ԱՀՈՒ համակարգի կատարելագործում

Դուալ ԱՀՈՒ-ի արդյունավետ իրականացման համար սահմանվել են ներգրավված գործընկերների (ուսանողների, ընկերությունների եւ ՄԿՈՒ հաստատությունների) իրավունքներն ու պարտականությունները, կարգավորվել են վճարման, աշխատաժամանակի, ապահովագրության, ռիսկերի բաշխման եւ աշխատանքային իրավահարաբերություններից բխող այլ հարցեր: Գործատուի մոտ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների եւ հմտությունների ձեւավորմանը, գործատուների ներգրավմանը եւ սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը եւ որակավորումների փոխճանաչմանը եւ այլն:

Կրթության կառավարման ու կազմակերպման համագործակցային մոդելի ներդրում՝ սոցիալական գործընկերության պատասխանատվություն

Սահմանվել է սոցիալական գործընկերության նոր եզրույթ, համաձայն որի՝ համագործակցության հիմքում ընդհանուր նպատակներն ու շահեկան համագործակցությունն է: Նախագծով գործընկերության կողմերին տրվել են գործառույթներ, իրավունքներ, պարտականություններ, ամրագրվել են ՄԿՈՒ կազմակերպման փուլերում սոցիալական գործընկերների եւ գործատուների ներգրավման մեխանիզմները՝ սկսած կրթական ծրագրերի մշակումից մինչեւ պետական ամփոփիչ ստուգմանը մասնակցություն, սոցիալական գործընկերոջ ակտիվ ներգրավվածությունը ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդներում: Հստակեցվել են ՄԿՈՒ շահագրգիռ կողմերի դերն ու պարտականությունները, նախատեսվել է դուալ ՄԿՈՒ ոլորտը համակարգելու համար պատասխանատու մարմին:

ՄԿՈՒ ոլորտում անցում ՈԱՇ-ին, ՈՈՇ-ին եւ կրեդիտային համակարգի

Նախագծով արմատապես վերանայվել են ՄԿՈՒ կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմքերը, որակի ապահովման ու վերահսկողության կառուցակարգերը՝ նախատեսելով նաեւ ՄԿՈՒ ոլորտում անցում որակավորումների ազգային շրջանակի եւ որակավորումների ոլորտային շրջանակի: Նախատեսվել են ՄԿՈՒ-ում կրեդիտային համակարգի ներդրում եւ դրա կիրառման կարգավորումներ՝ ապահովելով կրեդիտների համադրելիությունը, փոխանցելիությունը, ուսանողների սահուն շարժունությունը, ուսումնառությունը հաջորդ մակարդակի կրթական ծրագրով շարունակելու հնարավորությունը:

ՄԿՈՒ հաստատությունների կառավարման բարելավում

ՄՈՒՀ-երի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից, մասնավորապես՝

- Վերանայվել է կառավարման խորհուրդների կազմը՝ դրանցում առանձնահատուկ տեղ հատկացնելով ՄՈՒՀ-ի հետ տվյալ ոլորտում առավել ակտիվ համագործակցող կամ կրթական ծրագիր իրականացնող գործընկեր կազմակերպություններից, մասնավոր հատվածի շահերը ներկայացնող կառույցներից անդամակցությանը:

- Հստակեցվել են ՄՈՒՀ-ի տնօրենին եւ կառավարման խորհրդի անդամին ներկայացվող պահանջները, նրանց լիազորությունների դադարեցումը եւ դադարումը:

- Ներդրվել է ՄԿՈՒ տնօրենի զարգացման ծրագրի եւ տարեկան ծրագրի կատարման հաշվետվություն ներկայացնելու մեխանիզմ, որոնցում հաշվի են առնված հաստատությունների զարգացման ծրագրերի ու բիզնես պլանների իրականացումը, ինչը թույլ է տալիս գնահատել հաստատությունների կատարողականը (մասնավորապես՝ ոչ ֆիսկալ ցուցանիշների համար): Ընդ որում՝ նախատեսված է ՄՈՒՀ կառավարման խորհրդի կողմից տնօրենին անվստահություն հայտնելու գործընթացի հնարավորություն՝ ՄՈՒՀ-ի գործունեության տարեկան ծրագրի եւ զարգացման ծրագրի կատարման տնօրենի տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդի կողմից երկու անգամ անընդմեջ չընդունվելու դեպքում:

- Հանվել է ՄՈՒՀ-ի տնօրենի հավաստագրման համար նախատեսված պարտադիր վերապատրաստման պահանջը՝ փոխարենը նախատեսելով, որ տնօրենը առնվազն երեք տարին մեկ անգամ պետական միջոցների հաշվին անցնում է պարտադիր վերապատրաստում՝ լիազոր մարմնի գնահատած կարիքներին համապատասխան սահմանված ծրագրով:

Մասնագիտական կրթական ծրագրերին ներկայացվող պահանջների վերանայում

Նախագծով հստակեցվել են կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից կազմվող եւ հաստատվող կրթական ծրագրին ներկայացվող պահանջները:

Սահմանվել է, որ ՄՈՒՀ-ը կազմում է համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի կազմակերպման նախահաշիվը՝ ըստ լիազոր մարմնի սահմանած չափանիշների: Դա թույլ է տալիս ի սկզբանե հաշվարկել, գնահատել ու կանխատեսել կրթական ծրագրի իրականացման հետ կապված անհրաժեշտ ռեսուրսները՝ դրանով իսկ ապահովելով ծրագրի որակյալ ընթացքը, ինչպես նաեւ մասնավոր սեկտորի հետ համագործակցությամբ ռեսուրսների ներգրավումը:

Վերանայվել են կրթական ծրագրերի կազմակերպման մոդելները՝ նախատեսելով առկա, հեռավար եւ դրսեկության ձեւերի մեթոդաբանական համադրությամբ կրթական ծրագրի իրականացման հնարավորություն:

Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի եւ որակավորումների լիցենզավորում

Նախագծով նախատեսվել է կրթական ծրագրի իրականացումն արտոնելու երկաստիճան համակարգ՝ մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզավորում եւ յուրաքանչյուր որակավորման լիցենզավորում: Այսպես՝ կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման համար գնահատման առարկա են հիմնականում ենթակառուցվածքների առկայությունը՝ շենքային, լսարանային, լաբորատոր, սպորտային եւ գրադարանային պայմանների, ՄՈՒՀ-ի հինգ տարվա ռազմավարական ծրագիր: Մինչդեռ որակավորման համար լիցենզիայի տրամադրման պայմանները նախատեսում են, ըստ որակավորումների ուղղվածության, համապատասխան գույքի եւ սարքավորումների, ԱՀՈՒ ապահովող գործընկեր կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրային բազայի, անհրաժեշտ մանկավարժական եւ ուսումնաօժանդակ աշխատողների առկայություն:

ՄԿՈՒ-ի ֆինանսավորման համակարգի վերանայում եւ ձեռնարկատիրական գործունեության խթանում

Նախագծով բարեփոխվել է ՄՈՒՀ-երի ֆինանսավորման մեխանիզմը՝ հիմքում նախատեսելով կրթական ծրագրի ապահովման արժեքը, նպատակային ֆինանսավորման մեխանիզմը, ինչպես նաեւ հստակեցվել են պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները եւ մեխանիզմները: Կմշակվի մեկ ուսանողի համար ծախսերի բանաձեւ, որը հնարավորություն կտա հաշվարկել եւ նախատեսել ՄԿՈՒ-ի տրամադրման ծախսերը եւ այդպիսով բարձրացնել մասնավոր հատվածի կողմից պետական ֆինանսավորման եւ համաֆինանսավորման արդյունավետությունը: Տարանջատվել են ուսանողների առաջադիմության՝ կրթաթոշակ եւ սոցիալական հիմքով փոխհատուցումները՝ նպաստները:

Նախագծով կանոնակարգվել են նաեւ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման աղբյուրները եւ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորություններն ու կառուցակարգերը, որոնք գործող օրենսդրության պայմաններում գործնականում չէին գործում: Օրինակ՝ ՄԿՈՒ հաստատությունները կարող են ունենալ իրենց մասնագիտությունների գծով ծառայությունների մատուցման, ապրանքների արտադրության եւ վաճառքի ընդլայնման հնարավորություններ, տարբեր նպատակներով ստեղծել բազմաշահակից աշխատանքային ծրագրեր: Ձեռնարկատիրական գործունեության խթանումը ՄՈՒՀ-երի նյութական ապահովման, ԱՀՈՒ կազմակերպման եւ արդյունավետ գործունեության կարեւորագույն երաշխիք է:

ՄՈՒՀ-երի վարչական եւ մանկավարժական անձնակազմի բարեփոխում

Նախագծով հստակեցվել են ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների ընտրության կառուցակարգերը՝ նախատեսելով մրցույթային կարգ եւ խստացված պահանջներ՝ մանկավարժական աշխատողի թեկնածուների համար: Միաժամանակ, հստակեցվել են մանկավարժական աշխատողների ատեստավորման չափանիշները եւ ընթացակարգերը՝ որպես զբաղեցված պաշտոնին համապատասխանության ստուգման մեխանիզմ: Նախատեսվել է, որ մանկավարժական աշխատողը ՄՈՒՀ-ի միջոցների հաշվին նախապես անցնում է վերապատրաստում: Ատեստավորումը անհրաժեշտ պայման է՝ մանկավարժական աշխատողի կողմից որակավորման տարակարգի շնորհման գործընթացին մասնակցելու համար: Տարակարգերը սահմանվում են մանկավարժական, մասնագիտական (ոլորտային), կազմակերպչական եւ առաջնորդման գործառույթների եւ դրանց ապահովման չափանիշների հիման վրա: Ընդ որում՝ տարակարգի շնորհումը առաջ է բերում նաեւ ֆինանսական առավելություններ մանկավարժական աշխատողի համար՝ հավելավճարի ձեւով: Մանկավարժական աշխատողների շարունակական կատարելագործման գործընթացը խթանելու համար նախատեսվում է, որ որակավորման տարակարգը շնորհվում է երեք տարի ժամկետով: Ատեստավորման եւ որակավորման տարակարգի շնորհման համար նախատեսվում է փաստաթղթային եղանակ եւ գործընթացների օբյեկտիվություն ու թափանցիկություն ապահովող կառուցակարգ:

ՄԿՈՒ համակարգի ուսանողների եւ ունկնդիրների իրավունքների ու պարտականությունների կարգավորում

Նախագծով օրենքի մակարդակ են բարձրացվել ՄՈՒՀ ուսանողների իրավունքների ու պարտականությունների հարցերը, սահմանվել է ՄՈՒՀ-ի պարտավորությունը՝ ապահովել ուսումնառության անվտանգ եւ ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն եւ սպասարկում, ուսանողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ: Նախագծով լեգիտիմացվել են ուսանողական ինքնակառավարման մարմինների գոյությունն ու գործունեությունը՝ որպես ուսանողական նախաձեռնություններին աջակցող եւ նպաստող կառույցներ:

Հավասար հնարավորությունների ապահովում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կիրառման եւ ներառման միջոցով

Նախագծով համընդհանուր ներառական կրթությունը հռչակվում է որպես յուրաքանչյուր ուսանողի կրթության իրավունքի ապահովման երաշխիք՝ կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության եւ որակի ապահովման միջոցով: Սահմանվել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների ուսումնառությունը կազմակերպվում է նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, դրան համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների սահմանման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անհատական ուսուցման պլանի հիման վրա:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Բոլորիս նպատակը նույնն է՝ ապահովել որակյալ կրթություն»

սկիզբը՝ էջ 1

Վերջիններս հրապարակային մտահոգություն էին հայտնել հանրակրթական առարկայական չափորոշիչների եւ դասագրքերի մրցույթի վերաբերյալ: Նրանք առաջարկել էին առարկայական չափորոշիչներն ամբողջությամբ հրապարակել եւ դնել հանրային շահագրգիռ քննարկման, առայժմ չհայտարարել դասագրքերի մրցույթ, ինչպես նաեւ դրանք քննարկել մասնագետների ու արհեստավարժ մանկավարժների մասնակցությամբ:

Հանդիպումը կայացել է Վահրամ Դումանյանի նախաձեռնությամբ՝ նշված խնդիրները քննարկելու, նախարարության մոտեցումները ներկայացնելու, ինչպես նաեւ մասնագետների առաջարկները լսելու նպատակով:

Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ նախարարը նշել է, որ չափորոշիչների եւ առարկայական ծրագրերի՝ դեռեւս մշակման փուլում ներկաներից ոմանք ներկայացրել են առաջարկներ, որոնց հիման վրա լրամշակվել են համապատասխան ծրագրերը: Վահրամ Դումանյանի խոսքով՝ Տավուշի մարզի դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարաններում փորձարկված առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի քննարկման փուլն արդեն ավարտվել է. դրանք լրամշակվել եւ հաստատվել են նախարարի հրամանով:

«Մենք բաց ենք մասնագիտական դաշտում ընթացող ցանկացած քննարկման համար: Բոլորիս նպատակը նույնն է՝ մեր երեխաների համար ապահովել որակյալ կրթություն»,- նշել է նախարարը՝ հավելելով, որ այդ նպատակով էլ բազմաթիվ հանդիպումներ է ունեցել ոլորտի մասնագետների հետ:

Վահրամ Դումանյանը շեշտել է, որ ներկաների բարձրաձայնած մի շարք դիտարկումներ թյուրընկալման կամ անտեղյակ լինելու արդյունք են եւ իրականությանը չեն համապատասխանում: Այսպես՝ առարկայական չափորոշիչներն ամբողջությամբ հրապարակվել եւ հասանելի են եղել դեռեւս 2021 թվականի ապրիլից եւ անցել են հանրային լայն քննարկում, չափորոշիչների եւ ծրագրերի մշակման նպատակով ժամանակին հայտարարվել է բաց մրցույթ, որին կարող էր մասնակցել ցանկացած ոք, այդ թվում՝ ներկաները, չափորոշիչները եւ ծրագրերը մշակել են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված շուրջ 70 մասնագետները: Վահրամ Դումանյանը շեշտել է՝ նոր չափորոշիչների շրջանակում դեռեւս որեւէ դասագիրք չի հրապարակվել. առաջիկայում այդ նպատակով կհայտարարվի մրցույթ:

Ամփոփելով հանդիպումը՝ Վահրամ Դումանյանն ընդգծել է, որ նախարարությունը պատրաստակամ է մշտապես անցկացնել տարբեր հանդիպումներ եւ բաց է մասնագիտական առաջարկների համար:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Մատնանշվել են համագործակցության առաջնահերթ ուղիները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալներ **Ժաննա Անդրեասյանը** եւ **Արթուր Մարտիրոսյանն** ընդունել են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի Հարավային Կովկասի գենդերային եւ տնտեսական ներառման քաղաքականության ղեկավար **Մարիամ Կոբալիային** եւ գենդերային եւ տնտեսական ներառման վերլուծաբան **Քեթի Տիկանաշվիլիին:**

Հանդիպման ընթացքում քննարկվել են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հնարավոր աջակցությունը Հայաստանի կրթության եւ, մասնավորապես, մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի բարեփոխումների ընթացքին:

Նախարարի տեղակալները մատնանշել են հնարավոր համագործակցության այն ուղիները, որոնք առաջնահերթ են երկու կողմերի համար: Նրանք ընդգծել են, որ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունվել է *«Կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման ծրագիրը»,* որտեղ սահմանվել են ոլորտի թիրախները եւ կարիքները:

Որպես մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտը համակարգող նախարարի տեղակալ՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է կրթություն-մասնավոր հատված համագործակցությունը եւ դրա շրջանակում իրականացվող ծրագրերը: Փոխնախարարն ընդգծել է մասնավոր հատվածի համար ՄԿՈՒ ոլորտի որակյալ աշխատուժի խնդիրը՝ այդ համատեքստում կարեւորելով համապատասխան հմտությունների զարգացումը կարճաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի միջոցով: Ժաննա Անդրեասյանը նաեւ նշել է, որ բարեփոխումներն իրականացվում են պետության համար գերակա համարվող ոլորտներում մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Այդ համատեքստում նա տեղեկացրել է, որ վերջերս Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջը վերակազմակերպվել է հիմնադրամի՝ գործնական ուսուցման կենտրոնի ֆրանսիական մոդելի կիրառմամբ, որը կնպաստի գյուղատնտեսական մասնագիտությունների զարգացմանը: Նրա խոսքով՝ այս մոդելը կարող է հաջողված օրինակ հանդիսանալ՝ ոլորտի մյուս հաստատությունների համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի կարիքների քարտեզագրման հնարավորությանը՝ համապատասխան փորձագետների ներգրավմամբ: Կարեւորվել են նաեւ աշխատաշուկայում գենդերային հավասարության խթանման, կրթության ներառականության եւ հասանելիության հետ կապված այլ հարցեր: Ձեռք է բերվել պայմանավորվածություն կազմակերպել եւս մեկ հանդիպում՝ առավել մանրամասն քննարկելու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից առաջարկվող աջակցության ձեւաչափը:

Հ. Հ.

Աջակցություն՝ կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքին

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արթուր Մարտիրոսյանը** եւ **Ժաննա Անդրեասյանն** ընդունել են Ասիական զարգացման բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Պաոլո Սպանտիգատիի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Ասիական զարգացման բանկի հնարավոր աջակցությունը Հայաստանի կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքին:

Ողջունելով ներկաներին՝ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ Ասիական զարգացման բանկի հայաստանյան գրասենյակը հանդիսանում է ԿԳՄՍ նախարարության կարեւոր գործընկերներից մեկը, որի հետ կրթության ոլորտում տարիներ շարունակ իրականացվել են տարբեր ծրագրեր: Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է Ասիական զարգացման բանկի հետ իրականացված ծրագրերը՝ առանձնահատուկ ընդգծելով ԱԶԲ-ի աջակցությամբ մշակված Հեռավար ուսուցման հարթակը: Նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել բանկին՝ ՀՀ կրթության ոլորտի մի շարք իրավական փաստաթղթերի մշակման գործում ունեցած աջակցության համար:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն իր հերթին անդրադարձել է բանկի հետ համագործակցության ուղիներին եւ արձանագրված լավագույն փորձին:



Նրա խոսքով՝ ՀՀ կառավարությունը դպրոցաշինության ոլորտում սահմանել է բավականին հավակնոտ թիրախներ, մասնավորապես՝ 300 դպրոցի կառուցման եւ վերակառուցման ուղղությամբ: Ժաննա Անդրեասյանն ուրախությամբ փաստել է, որ ԱԶԲ-ի կողմից իրականացվող *«Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիրն»* աջակցություն է այդ թիրախների իրականացմանը: Այդ համատեքստում փոխնախարարը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության վերջին նիստում վերոնշյալ ծրագրում ընդգրկված 10 դպրոցների տրամադրվել է գույք՝ կրթական միջավայրն առավել ամբողջական դարձնելու նպատակով:

Ժաննա Անդրեասյանը եւս կարեւորել է ԱԶԲ-ի աջակցությամբ մշակված Հեռավար ուսուցման հարթակը՝ ընդգծելով, որ այն ոչ միայն մեծ օգնություն էր համավարակի ժամանակ ուսումնական գործընթացի կազմակերպմանը, այլ նաեւ ուղղված է կրթության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ նոր լուծումներ գտնելուն:

Նախարարի տեղակալները Ասիական զարգացման բանկի պատվիրակությանը ներկայացրել են ԲՏԵՄ առարկաների չափորոշիչների ներդրման գործընթացը, ինչպես նաեւ *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի»* հիմնական ուղղությունները:

Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչներն իրենց պատրաստակամությունն են հայտնել շարունակելու աջակցությունը ԿԳՄՍ նախարարությանը, որը կարող է ներառել նաեւ մարդկային ռեսուրսների զարգացումը: Հանդիպմանը ձեռք է բերվել պայմանավորվածություն առ այն, որ ԱԶԲ-ն կուսումնասիրի *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»* եւ դրանից բխող միջոցառումների շրջանակը՝ հնարավոր աջակցության ծրագրեր իրագործելու համար: Նշվել է, որ ԱԶԲ-ն հանդես կգա հնգամյա ծրագրով, որտեղ կարող են ներառվել նաեւ կրթության ոլորտին ուղղված աջակցության ծրագրեր՝ Կրթության զարգացման պետական ծրագրում նախանշված նպատակներին հասնելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԿԳՄՍ նախարարության եւ Ասիական զարգացման բանկի հետագա համագործակցությանը վերաբերող մի շարք այլ հարցեր:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հանրային քննարկումներ

Ներկայացվել են դպրոցի տնօրենի եւ վարչատնտեսական համակարգողի մրցույթների անցկացման եւ նշանակման կարգերի նախագծերը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման»* եւ *«Պետական ուսումնական հաստատության համակարգողի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման եւ նշանակման»* կարգերի նախագծերը:

Նախագծերի անհրաժեշտությունը բխում է *«Հանրակրթության մասին»* օրենքի փոփոխության պահանջից, որտեղ ամրագրված է ուսհաստատություններում կառավարման գործընթացի տարանջատումը տնօրենի եւ վարչատնտեսական մասի համակարգողի միջեւ:

Հաստատության ուսումնադաստիարակչական եւ վարչական գործընթացների կառավարումը վերապահվում են տարբեր ղեկավարների՝ ուսումնադաստիարակչական մասի գործադիր մարմինը տնօրենն է, իսկ վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրականացնում է վարչատնտեսական համակարգողը, որոնց լիազորությունների, պարտականությունների ու պատասխանատվության մասին դրույթները սահմանված են օրենքով: Տարանջատման արդյունքում ակնկալվում է արդյունավետ կառավարում՝ գործառույթների եւ պատասխանատվության հստակ բաշխմամբ:

Ուսումնական հաստատության կառավարման առաջարկվող նոր մոդելով վարչատնտեսական համակարգողն իրականացնում դպրոցի վարչական, տնտեսական եւ ֆինանսական կառավարումը: Համակարգողը տնօրենի հետ իրականացնում է միայն ուսումնական գործընթացի պլանավորում եւ համապատասխանաբար անհրաժեշտ պայմանների ապահովում: Տնօրենը չի զբաղվում վարչական, տնտեսական եւ ֆինանսական հարցերով. նա իրականացնում է մանկավարժական աշխատողների մրցույթի կազմակերպման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման գործընթացները:

Այսպիսով՝ ուսումնական հաստատության կառավարումը տարանջատելու արդյունքում գործադիր մարմին համարվող երկու ղեկավարները կզբաղվեն հավասարապես կարեւոր եւ աշխատատար գործառույթներով՝ դրանք իրականացնելով համագործակցային մեխանիզմով:

Հետեւաբար, օրենքից բխող փոփոխությամբ պայմանավորված, վերանայման անհրաժեշտություն է առաջացել տնօրենի մրցույթի կարգում: Նախագծով հստակեցվել են մրցույթի մասնակցի ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, զարգացման ծրագիրը փորձաքննության ներկայացնելու ընթացակարգը, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության նկարագիրը, մրցույթի արդյունքների ամփոփման, բողոքարկման մեխանիզմը:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ հոկտեմբերի 22-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Ներկայացված առաջարկների եւ դիտողությունների արդյունքում նախագծերը կլրամշակվեն եւ կխմբագրվեն:

Հ. Հ.

Բուհ

«Սպորտուս»-ը՝ գործողության մեջ

Ինչպես արդեն հայտնի է ընթերցողին, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտում այս տարի բացվել է *«Սպորտուս»* հենակետային քոլեջը: Այդ կապակցությամբ՝ մեր թղթակիցը զրուցել է ՀՖԿՍՊԻ արտաքին կապերի եւ ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր **Անժելա Նուշիկյանի** հետ:

Մեր զրուցակցի խոսքով՝ ՀՖԿՍՊԻ-ում 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի ժամկետը ավարտվելուց հետո՝ մինչեւ նոր ծրագիր կազմելը, ինստիտուտի ղեկավարությունը մոնիթորինգ է արել, վերլուծել եւ փորձել հասկանալ իրականացված աշխատանքները, որպեսզի մարզական բուհը հետագայում ավելի վստահ քայլերով առաջ ընթանա:

«Նախորդ ռազմավարության մեջ եղել է նաեւ հենակետային քոլեջ ստեղծելու ծրագիր, սակայն ինչ-ինչ պատճառներով այն կյանքի չի կոչվել: ՀՖԿՍՊԻ-ին հստակ նախանշել է իր զարգացման ուղին, արդեն իսկ վերածեւակերպել բուհի առաքելությունը եւ դիրքավորվել՝ որպես ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ այն սպասարկող ոլորտների համար մասնագետներ պատրաստող առաջատար բուհ: Եվ այս ճանապարհին հենակետային քոլեջ ունենալը եղել է ռազմավարության կարեւոր մասը»,- նշում է Անժելա Նուշիկյանը:

Տարիների փորձը ցույց է տվել, որ բուհի դիմորդների քանակը չի նվազում. 450-600 միջին թիվը պահպանվում է: Պրոռեկտորը փաստում է՝ նրանց մեջ քիչ տոկոս են կազմում բարձրակարգ մարզիկները, որոնք, շարունակելով իրենց կարիերան, հետագայում մարզիչ կդառնան, իսկ շատերը բուհ դիմում են ուղղակի՝ առանց մասնագիտական կողմնորոշման:

«Մեր նպատակն է՝ քոլեջի ուսումնառության ընթացքում կողմնորոշել եւ տալ այնպիսի գիտելիքներ, որոնցով շրջանավարտները՝ որպես մեր աճեցրած կադրեր, ցանկության դեպքում կկարողանան համալրել ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը: Այդպես կլուծվի նաեւ կադրերի միջազգայնացման խնդիրը: Դրա համար որպես ռազմավարական խնդիր պետք է ունենալ ավելի որակյալ կադրեր»,- շեշտում է Անժելա Նուշիկյանը՝ հավելելով, որ քոլեջին հատկացվել է 95 տեղ, որոնցից կձեւավորվի կողմնորոշված դիմորդ:

Նրա խոսքով՝ պետք է կրթել եւ դաստիարակել կադրեր, որոնք հետո կդասավանդեն ինստիտուտում, կզբաղվեն գիտությամբ եւ կզարգացնեն այն: Պրոռեկտորը վստահեցնում է՝ այդ դեպքում քոլեջի դիմորդը չի կորցնի տարիներ, կսովորի եւ առավել հստակ կկողմնորոշվի իր մասնագիտական ուղղվածության մեջ, ինչպես նաեւ կապահովվի վերջինիս կրթության շարունակականությունը:

Քոլեջում կդասավանդվեն չորս հիմնական ուղղություններ՝ ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ, սպորտային զբոսաշրջություն, բուժական մերսում եւ թիկնապահական գործ:

«Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ինստիտուտի շրջանավարտների շատ մեծ տոկոսը հետագայում աշխատում է որպես թիկնապահ, անվտանգության աշխատակից: Այո՛, թյուր կարծիք կա, թե թիկնապահ աշխատելու համար միայն ֆիզիկական ուժը բավարար է, սակայն դա ամենեւին էլ այդպես չէ: Իրականում այն շատ լուրջ, նուրբ, բազմակողմանի հմտություններ եւ գիտելիքներ պահանջող մասնագիտություն է, որը ներառում է նաեւ հոգեբանական պատրաստվածություն, հայացքների հաղորդակցման եւ այլ հմտությունների տիրապետում, առաջին բուժօգնություն եւ այլն»,- նշում է Անժելա Նուշիկյանը եւ շեշտում, որ եթե այդ դաշտը բաց է, ապա պետք է պատրաստել պրոֆեսիոնալ, իրական թիկնապահներ, որոնք հետագայում մասնագիտության մեջ խորանալու ցանկության դեպքում կարող են իրենց կրթությունը շարունակել ՀՖԿՍՊԻ–ում՝ փրկարարական գործ մասնագիտությամբ: Պրոռեկտորը հավաստիացնում է՝ ուսումնառության ընթացքում բարձր մակարդակի վրա է լինելու լեզուների տիրապետումը՝ առնվազն հանգիստ հաղորդակցվելու մակարդակում:

«Դիմորդը քոլեջ է գալիս հիմնական դպրոցի հիմքով, այսինքն՝ 9-րդ դասարանն ավարտելուց հետո: Ավագ դպրոցի փոխարեն՝ երիտասարդը «Սպորտուս»-ում սովորելու է երեք, իսկ «Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ» մասնագիտության դեպքում՝ չորս տարի՝ ստանալով ավագ դպրոցի կրթություն եւ դրան զուգահեռ յուրացնելով իր մասնագիտական ուղղվածությունը: Տրված դիպլոմով նա կարող է միանգամից մտնել աշխատաշուկա կամ լավ առաջադիմության պարագայում ուսումը շարունակել ինստիտուտի հեռակա բաժնի 2-րդ կուրսում»,- ասում է Անժելա Նուշիկյանը՝ հավելելով, որ մյուս մասնագիտություններով ընդունելությունը կատարվել է դպրոցի գնահատականների հիման վրա:

Նշենք, որ ընդունելության քննությունների արդյունքում եւ մրցութային կարգով համալրվել են քոլեջին հատկացված բոլոր 95 տեղերը, այդ թվում՝ 5 օտարերկրյա՝ ՌԴ-ից, Սիրիայից, Վրաստանից եւ Իտալիայից:

Ինստիտուտի առաջին հարկում քոլեջին տրամադրվել են նորոգված լսարաններ, սակայն դասերն անցկացվելու են բուհի ամբողջ տարածքում. սովորողները օգտվելու են մարզումային դահլիճներից, առարկայական կաբինետներից:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հոբելյան

Երեւանի ամենահին դպրոցը նշեց 190-ամյակը

Այս տարի 190-ամյակը բոլորեց Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հ. 2 հիմնական դպրոցը: Ամենահինն է այս կրթօջախը քաղաքամայր Երեւանի դպրոցների մեջ: Հիմնադրվել է հեռավոր 1832-ին: Ճիշտ է, մինչ այդ էլ Երեւանում եղել են դպրոցներ, բայց դրանք եղել են վանական, ծխական, հոգեւոր դպրոցներ, որոնք, ցավոք, երկար կյանք չեն ունեցել, բացվել են եւ փակվել: Առաջին պետական դպրոցը, որ հիմնադրվել է մեր հինավուրց Երեւանում, հոբելյար կրթօջախն է, ասել է թե՝ Երեւանում հիմնադրված ամենահին պետական դպրոցը:

Դպրոցի 6-րդ տնօրենը եղել է Խաչատուր Աբովյանը, շուրջ 5 տարի ղեկավարել է ուսումնական հատատությունը. անշուշտ, վիթխարի է նրա ներդրումը դպրոցի կայացման, զագացման գործում: 1925 թ.-ից կրթօջախը կրում է մեծ լուսավորչի անունը:

Դպրոցի ականավոր շրջանավարտներից են Դրաստամատ Կանայանը, Հայկ Կանայանը, Համո Բեկնազարյանը, Թաթուլ Ալթունյանը եւ ուրիշներ: Շրջնավարտների մեծ մասը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին եւ Արցախյան բոլոր պատերազմներին: Դպրոցի շրջանավարտներից Սեյրան Բարսեղյանը, Սերգեյ Հովհաննիսյանը, Լեւոն Ավետիսյանը, Ալբերտ Հովհաննիսյանը, Կարո Հովագիմյանը, Գոռ Սիմոնյանն ու Հովհաննես Կորկոտյանը 44-օրյա պատերազմում եւ սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների ժամանակ իրենց երիտասարդ կյանքերը տվեցին հայրենիքին. մի քանի օր առաջ դպրոցը Եռաբլուր՝ դեպի անմահություն, ճանապարհեց իր նախկին սաներից Սպարտակ Ղազարյանին՝ զոհված սեպտեմբերի 13-ի ռազմական բախումների ժամանակ:

Աբովյանի անվանակիր դպրոցը առաջիններից է Հայաստանում, որ ստացավ թեքում՝ ֆիզմաթ, այլ հանրապետություններից գալիս էին, ընդունվում այս դպրոց: Կրթօջախի սաները մասնակցել են մրցույթների եւ օլիմպիադաների, շահել մրցանակներ: Դպրոցը շնորհակալագրեր է ստանում ավագ դպրոցներից, որտեղ իրենց ուսումն են շարունակում Աբովյանի անվան դպրոցի աշակերները: Կրթարանի հաջողությունները լուսաբանվում են ՁԼՄ-ներով:

Հոկտեմբերի 14-ին դպրոցում, հիմնադրման 190-ամյակի առթիվ, տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում: Այն սկսվեց ՀՀ պետական օրհներգով, ապա ցուցադրվեց դպրոցը համառոտ ներկայացնող գեղեցիկ ու իմաստալից տեսանյութ, որի հեղինակը դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի, *«Մանուկների մոլորակ»* գեղագիտական կենտրոնի ղեկավար, համանուն հաղորդաշարի հեղինակ եւ վարող, մանկական երգերի հեղինակ **Զառա Սարիբեկյանն** է:

Ցերեկույթը վարում էին Զառա Սարիբեկյանը եւ 4-րդ դասարանի աշակերտ **Արամե Սողոմոնյանը:** Տեսանյութի դիտումից հետո Զառա Սարիբեկյանը բեմ հրավիրեց դպրոցի տնօրեն **Նարինե Նազարյանին:** Տիկին տնօրենն իր խոսքում նշեց, որ Խ. Աբովյանի անվան դպրոցը առաջինն ու միակ է, որ տարբեր անվանումներ ու կարգավիճակներ ստանալով՝ իր գոյությունն է հարատեւել է մինչ օրս: Նա ասաց, որ այսօր հաշվետվության օր է՝ 189 եւ 1 տարվա: Ըստ տիկին Նազարյանի՝ դպրոցը միակ վայրն է, ուր, անկախ երկրի վիճակից, պիտի հնչի մանկական խոսքը: Բանախոսն իր խոնարհումը հայտնեց ծնողներին, նշեց, որ դպրոցի ուսուցիչներից 2-ն անցել են կամավոր ատեստավորում եւ ստացել փայլուն արդյունքներ: Տնօրենը բեմ հրավիրեց Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ **Լեւոն Հովհաննիսյանին,** ով իր ելույթում անդրադարձավ հատկապես ուսուցիչներին. իբրեւ երախտիքի դրսեւորում՝ նա Երեւանի քաղաքապետարանի կողմից մանկավարժական բազմամյա գործունեության եւ կրթության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար շնորհակալագրեր հանձնեց դպրոցի ուսուցիչներ **Անահիտ Վարդանյանին, Լիա Աբգարյանին, Գայանե Սահակյանին, Ռուզաննա Հարությունյանին, Գոհար Հակոբջանյանին, Գրետա Բաղմանյանին, Գոհար Մխիթարյանին, Անահիտ Հովհաննիսյանին, Լուսինե Ղազարյանին, Ծովիկ Գրիգորյանին:** Փոխքաղաքապետը շնորհավորեց ներկաներին հոբելյանի կապակցությամբ, վստահություն հայտնեց, որ լավագույն տարիները դեռ առջեւում են: Դպրոցի շրջանավարտ, Արցախյան երեք պատերազմների մասնակից, *«Արծիվ»* մահապարտների կազմակերպության անդամ, ՀՀ ԱԺ պատգամավոր **Հակոբ Ասլանյանը** իր ելույթում շնորհավորեց այս մեծ տոնի կապակցությամբ, ասաց, որ հպարտ է այս դպրոցի շրջանավարտ լինելու համար, *«Արծիվ»* մահապարտների կազմակերպության անունից նա պատվոգիր հանձնեց դպրոցին:

Ցուցադրվեց դպրոցի պատմությունը ներկայացնող տեսաֆիլմ, որն ստեղծել է դպրոցի նախկին տնօրեն **Իռեն Հակոբյանը**՝ կրթօջախի 175-ամյակի կապակցությամբ:

Դպրոցում կա բարի ու գեղեցիկ ավանդույթ՝ առաջին դասարանցիների երդման արարողությունը կազմակերպել Խ. Աբովյանի ծննդյան օրը. այս տարվա առաջինցիների երդման արարողությունը տեղի ունեցավ ցերեկույթի ընթացքում՝ նրանք մկրտվեցին որպես աբովյանականներ. երդմնակալությունից հետո ներկաները ծափահարություններով ճանապարհեցին փոքրիկ աբովյանականներին: Այնուհետ դպրոցի երգչախումբը, **Կարինե Ստեփանյանի** ղեկավարությամբ, կատարեց *«Էրեբունի-Երեւան»* երգը՝ մեր բազմահազարամյա մայրաքաղաքի օրհներգը:

Շառլ Ազնավուրի *«Ավե Մարիա»* ստեղծագործությունը սաքսաֆոններով եւ ֆլեյտայով կատարեցին դպրոցի աշակերտները, ովքեր սովորում են Ալիքսեյ Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցում՝ **Իրինա Գասպարյանի** դասարանում. աբովյանցիներից շատերն են հաճախում այդ երաժշտական կրթօջախը: Այնուհետ բեմ հրավիրվեցին 1986-1999 եւ 1999-2021 թթ. դպրոցի տնօրեններ **Սարգիս Հովսեփյանն** ու **Իռեն Հակոբյանը,** նրանց հանձնվեցին շնորհակալագրեր: Տիկին Հակոբյանը գնահատանքի ու երախտագիտության խոսքեր ասաց դպրոցի նախկին ու ներկա բոլոր տնօրենների, ուսուցիչների, դասվարների, տնտեսական, տեխնիկական մասի աշխատողների, գործավարների ու բուժքրոջ մասին, հատուկ շնորհակալություն հայտնեց ծանր տարիներին դպրոցում իրենց առաքելությունը կատարած տնօրեներին եւ ուսուցիչներին: Հանդիսավարուհին շնորհակալություն հայտնեց ծնողական համայնքին եւ բեմ հրավիրեց *«Նաիրյան»* վոկալ անսամբլին, որի հիմադիրն ու ղեկավարը՝ **Նարիա Մուղդուսյանը,** նույնպես ծնողական համայնքի ներկայացուցիչ է. վերջինս իր խոսքն ասաց, ապա անսամբլը կատարեց կոմիտասյան շարք. անսամբլին հանձնվեց դպրոցի շնորհակալագիր: Որոտընդոստ ծափահարությունների եւ Խաչատրյանի անմահ վալսի հնչյունների ներքո բեմ հրավիրվեցին կրթօջախի վետերան ուսուցիչները՝ **Լիրա Խալափյանը, Տատյանա Յալամովան, Սուսաննա Վարձիգուլյանը, Գրետա Մեջլումյանը, Եպրաքսյա Հակոբյանը, Սվետլանա Դանիելյանը, Մաքրուհի Կարապետյանը, Գայանե Ալբերտյանը** եւ **Յուրա Մկրտչյանը,** նրանցից խոսեց շուրջ 45 տարի դպրոցում աշխատած Եպրաքսիա Հակոբյանը: Այնուհետ ներկաներն ըմբոշխնեցին *«Փափուրի»* ազգագրական պարը՝ դպրոցի սաների կատարմամբ. գեղարվեստական ղեկավար՝ **Ջուլյա Մակունց:** Հանդիսավարուհին անդրադարձավ դպրոցի այսօրվա ուսուցիչներին, ներկայացրեց դպրոցի տնօրինությանը: Դպրոցի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին կրթօջախի ուսուցիչներին դարձյալ վալսի հնչյունների ներքո: Աշակերտները ներկաների դատին հանձնեցին փոքրիկ ներկայացում՝ մի դրվագ դպրոցի տարբեր ժամանակների նախկին տնօրենների, այդ թվում՝ Խաչատուր Աբովյանի հանդիպումից (բեմադրության հեղինակ՝ **Լիա Աբգարյան**): Միջոցառման ընթացքում ցուցադրվեց հոբելյար կրթօջախի շրջանավարտներից դերասան, հումորիստ **Հովհաննես Դավթյանի** տեսաողջույնը՝ ուղղված ներկաներին, քանի որ նա երկրում չէր, իր երգային կատարումով ներկաներին ողջունեց մեկ այլ շրջանավարտ՝ Կոմիտասի անվան մայր երաժշտանոցի ուսանող **Արտյոմ Ասմանգուլյանը:** *«Մանուկների մոլորակ»* խմբի երեխաները կատարեցին *«Երգ խաղաղության»* ստեղծագործությունը (երգի հեղինակ՝ Զառա Սարիբեկյան), *«Մանուկների մոլորակ»* գեղագիտական կենտրոնի հիմնադիր **Անուշ Խաչատրյանը** դպրոցի կողմից ստացավ շնորհակալագիր: Ցերեկույթն ավարտվեց տնօրենի խոսքով: Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Ասլանյանը, Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը, Երեւանի ավագանու անդամ **Արման Հարությունյանը,** քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ **Մարգարիտ Խաչատրյանը,** Մանկավարժական համալսարանի ռեկտոր **Սրբուհի Գեւորգյանը,** դպրոցի տնօրինությունը, ուսուցչական կազմը, շրջանավարտներ, ծնողներ, աշակերտներ եւ այլք: Կրթավայրի առաջին հարկում ցուցադրությամբ ներկայացված էր հոբելյար ուսումնական հաստատության պատմությունը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ

Ներառական

Պատմության ուսուցչի աշխատանքը հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ

Ուսուցիչը եւ նրա մտածելակերպը՝ ահա որն է ամենագլխավորը ամենայն ուսուցման եւ դաստիարակության գործում:

Ա. Դիստերվեգ
(գերմանացի hajtni մանկավարժ)

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար:

2014 թվականին մեզանում համընդհանուր ներառական կրթությունը հռչակվել է՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք (*«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մաս):

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը եւ հասարակությունը: Այն կրթության կազմակերպման եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային եւ համայնքային կյանքին եւ նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը:

Ներառական կրթությունն օգնում է բոլոր երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող եւ առանց, նաեւ նպաստում ավելի կայուն, հանդուրժող եւ բարգավաճ հասարակության կայացմանը:

Որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն եւ հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման եւ իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության եւ համագործակցության միջավայր, եւ բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է (Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք:):

Ժամանակակից հասարակության կրթական համակարգի հրամայականը համընդհանուր ներառման ֆոնին հավասար հնարավորությունների ստեղծումն է: Այն բարդ, փուլային գործընթաց է, որը պետք է սկսվի յուրաքանչյուր անհատի, մանկավարժի, ծնողի, ապա նաեւ աշակերտի գիտակցությունից:

Ներառականության արդյունավետ իրականացման դժվարություններից է այն հանգամանքը, որ ուսուցիչները չգիտեն ինչպես աշխատել, ներառել եւ վերջապես, ինչպես վերաբերվել ԿԱՊԿՈՒ երեխաներին: Ուսուցիչը բախվում է մի իրավիճակի, որին պատրաստ չէ, եւ նա օգնության, ուղղորդման, մասնագիտական աջակցության կարիք է ունենում (*«Գործնական քայլեր ներառման ճանապարհին»,* ձեռնարկ, Սարգսյան Հ., Երեւան, *«Զանգակ»,* 2021): Ահա այստեղ կարեւորվում է *«ուսուցչի օգնականի»* (*«ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եւ նկարագրերը հաստատելու մասին»* ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն) դերը: Նա կարեւոր դերակատարում ունի սովորողների ուսուցման, դաստիարակության, նրանց ինքնակառավարման, անկախության եւ ինքնագիտակցության տարրերի ձեւավորման գործընթացներում:

Ստեղծելով համագործակցության արդյունավետ մեխանիզմներ՝ դասավանդող ուսուցիչը եւ ուսուցչի օգնականը համատեղ ջանքերով հնարավորություն ունեն ապահովելու մատչելի, հասանելի եւ արդյունավետ կրթական գործընթաց յուրաքանչյուր դպրոցում՝ յուրաքանչյուր երեխայի համար:

Ներառական կրթության մարտահրավերների լուծման շրջանակում իր դերն ունի նաեւ *«Պատմություն»* առարկայի ուսուցիչը: Պատմության դասաժամին ուսուցչի կողմից ճիշտ ընտրված եւ կիրառված մանկավարժական մեթոդներն ու մոտեցումները կբարձրացնեն աշխատանքների արդյունավետությունը, կնպաստեն բոլոր աշակերտների ներդաշնակ զարգացմանը, ներառմանը, կրթական գործընթացն էլ կպահպանի իր բոլոր գործառույթները:

Այսօր ավելի սրվել է դպրոցի պատմության դասընթացի բովանդակության խնդիրը: Գաղափարախոսության փոփոխությունները պահանջում են աշակերտների շրջանում պատմական գործընթացների եւ երեւույթների ավելի լայն, լիարժեք ընկալման ձեւավորում: Բացի այդ, այսօրվա իրողությունները պահանջում են մեր երեխաների մեջ հայրենասիրական դաստիարակություն: Եվ այս խնդիրը, առաջին հերթին, կատարվում է պատմության դասերով՝ օգտագործելով հերոսության, արիության եւ այլնի օրինակները: Կյանքն ինքնին մղում է դպրոցի պատմության դասընթացի բովանդակության մոտեցման արմատական վերանայման:

Պատմության դասի նպատակն է՝ ապահովել, որ սովորողները տիրապետեն պատմական գիտելիքներին, օգնեն նրանց տիրապետել արդյունավետ դասավանդման մեթոդներին, նպաստել բարոյական որակների զարգացմանը, կյանք մտնող մարդու սոցիալականացմանը եւ զարգացնել արդիականության հետ կապված պատմական փորձը վերլուծելու հմտություններ:

Դասի պլանավորումն արդյունավետ ուսուցման հիմնաքարերից մեկն է: Այն իրենից ներկայացնում է դասի մանրամասն նկարագրություն, որտեղ հստակ նշված է տվյալ դասի թեման, նպատակները, փուլային բաժանումները, իրականացվող աշխատանքները, անհրաժեշտ նյութերն ու պարագաները: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, այն որպես կանոն պետք է բխի ուսուցանվող նյութի նպատակից, աշակերտների տարիքային եւ զարգացման առանձնահատկություններից (նրանց գիտելիքների եւ հմտությունների ուժեղ եւ թույլ կողմերը):

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական եւ ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն եւ աշակերտակենտրոն մոտեցումները: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաեւ ավանդական մոտեցումների օգտագործումը. հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարեւոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Դիտարկենք պատմության դասաժամին կիրառվող մի քանի հնարներ:

1. Ուսուցչի կողմից ներկայացված իրադարձությունները ***ընդհանրացված ձեւով՝*** *աշակերտին հնարավորություն է տալիս հիշել պատմական իրադարձության հիմնական պատճառները, ամսաթվերը, հիմնական հերոսների անունները, իրադարձությունների հաջորդականությունը, դրա արդյունքներն ու հետեւանքները, հիմնական հասկացությունները: Անգամ թույլ աշակերտի մտքում ձեւավորվում է պատմական տարածության պատկեր, որում ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել:*

2. Պատմության դասավանդման մեջ գլխավորն այն փաստն է, թե տվյալ նյութի ***իրադարձությունների պատճառահետեւանքային կապը*** *ինչ արդյունքների կհանգեցնի:*

3. Ուսուցիչն ունի ***ներառարկայական եւ միջառարկայական հաղորդակցությունների իրականացման ձեւերի,*** *մեթոդների եւ տեխնիկայի բավականին մեծ ընտրություն: Տեղեկատվությունը նույնպես պետք է ուշադիր ընտրվի այլ առարկաներից՝ նկատի ունենալով, որ այլ լրացուցիչ տեղեկությունները չեն ծանրաբեռնում դասերը եւ «չեն մթագնում» պատմության դասավանդման նյութի բովանդակությունը:*

4. Դասերին կազմակերպվում են տարբեր տեսակի ***աշխատանքներ սկզբնաղբյուրների հետ:*** *Աշակերտների ավելի մեծ ակտիվությունը պայմանավորված է «աղբյուրների բախում» տեխնիկայի կիրառմամբ, երբ համեմատվում են մեկ իրադարձությանը նվիրված մի քանի սկզբնաղբյուրներ: Բավականին օգտակար են նաեւ հանձնարարությունները սկզբնաղբյուրի հեղինակությունը որոշելու համար:*

5. Ժամանակակից դասն անհնար է պատկերացնել՝ առանց ***տեխնիկական ուսուցման միջոցների օգտագործման.*** *Դրանց օգտագործումը կապված է այդ գործիքները դասի կենդանի հյուսվածքի մեջ օրգանապես ներառելու ունակության հետ (Պատմության դասավանդման մեթոդիկայի առարկան եւ խնդիրները https://rubezh71.ru/): Պետք է նկատի ունենալ, որ սահիկաշարերի, կինոդիտումների, փաստավավերագրական ֆիլմերի միջոցով զգալիորեն ընդլայնվում է դասի վիզուալիզացիայի շրջանակը եւ, որպես կանոն, ուժեղացվում է ուսումնական նյութի ազդեցությունը զգացմունքների վրա (Պատմության դասավանդման մեթոդիկայի առարկան եւ խնդիրները https://rubezh71.ru/):*

Պատմության դասավանդման համատեքստում դասավանդման ժամանակակից մեթոդներն ու մոտեցումները հետեւյալն են՝ ԳՈՒՍ, Մտագրոհ, Պրիզմա, Խճանկար, Ձնակույտ, Համագործակցություն-հակամարտություն-համակեցություն, Նոր նյութի բացատրություն, Քառաբաժան աղյուսակ, Տ-աձեւ, Մ-աձեւ աղյուսակներ, Երեք բանալի եւ մեկ կողպեք, Կենտրոններով աշխատանք, Բլյումի դասակարգում (տաքսոնոմիա), Ֆրայերի մեթոդ եւ այլն:

Որպեսզի պատմության դասերին սովորողների մոտ ճանաչողական հմտություն, գործնական կարողություն եւ ստեղծագործական մտածողություն ձեւավորվի,անհրաժեշտ է ուսուցչի կողմից կիրառվեն հետեւյալ զարգացնող առաջադրանքները՝ աշխատանք սկզբնաղբյուրների հետ, խնդիր-առաջադրանք, նախապես սխալներով պլանավորված դասախոսություն, դեպքի ուսումնասիրություն (case-study) եւ այլն:

Պատմության դասերը, որոնք **բովանդակությամբ նույնական** են, կարող են էականորեն տարբերվել իրենց վարման մեթոդից՝ հաշվի առնելով դասարանում սովորողների ճանաչողական կարողությունները: Որքան շատ են կատարելագործվում սովորողների հմտությունները, այնքան մեծանում է նրանց անկախությունը հանձնարարված առաջադրանքների կատարման ձեւերի, միջոցների, եղանակների եւ ժամանակի ընտրության հարցում:

Բոլոր երեխաները, առանց բացառության, կարող են սովորել, սակայն նյութն առավել հեշտ ընկալելու եւ սովորելու նրանց ոճերը տարբեր են: Որոշ երեխաներ հեշտությամբ սովորում են ուսուցչին ունկնդրելով, իսկ մյուսները կարող են նախընտրել գործողություններ կատարել ուսումնասիրվող նյութի հետ, ոմանց համար էլ կարեւոր են տեսողական միջոցների առկայությունը (սահիկաշարի շնորհանդես, պատկերազարդ դասագրքեր), խմբային քննարկումները եւ այլն: Երեխաների ուսումնառության այս տարբեր ոճերի հիմքում ընկած է նրանց փոխազդեցությունը իրենց հաղորդվող տեղեկատվությանը:

Ուսուցչի գործառույթների մեջ է մտնում հավասար հնարավորությունների ստեղծումը ե՛ւ դասարանային պայմաններում, ե՛ւ հոգեբանական մակարդակում: Պետք է հասնենք նրան, որ ցանկացած սովորող, անկախ զարգացման առանձնահատկություններից եւ ուսումնառության առանձնահատկություններից, իրեն ապահով, պաշտպանված եւ կարեւոր զգա դպրոցում, դասասենյակում, մեր դասի ժամին: Ցանկացած պարագայում նա պետք է ունենա իր մտքերը, հույզերն ու զգացմունքները ազատ արտահայտելու հնարավորություն, բարենպաստ միջավայր եւ բարեհամբույր, համբերատար ունկնդիր (*«Գործնական քայլեր ներառման ճանապարհին»* ձեռնարկ, Սարգսյան Հ., Երեւան, *«Զանգակ»,* 2021):

Ուսուցիչը դադարում է միայն սովորեցնող լինելուց. նա հավելյալ գործառույթներ է ստանձնում՝ ուղեկցողի, վստահված անձի, դառնում է յուրատեսակ կամուրջ այլոց հետ շփման համար: Այս ամենը իրագործելի կլինի, եթե արմատական հեղաշրջում լինի մեր հոգում, գիտակցության մեջ, քանի որ ներառող ուսուցումը, որպես գործընթաց, պետք է սկսվի մեր ներսից, այլ ոչ թե դասասենյակից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաներն առանձնահատուկ են, կրթությունը պետք է կազմակերպել՝ հիմքում ընդունելով բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքը: Ուսուցչի օգնականի առկայության դեպքում, ուսուցիչը հնարավորություն է ունենում դասն անցկացնել նվազագույն ընդմիջումներով, իսկ երբեմն էլ՝ առանց դրանց՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի առավելագույն յուրացումը: Սակայն ցանկացած օգնություն պետք է լինի չափավոր, միտում չունենա ամեն ինչ երեխայի փոխարեն անելու, այլ ընդհակառակը՝ նպաստի նրա մոտ նոր հմտությունների ձեւավորմանը եւ զարգացմանը, դրանք նոր եւ տարբեր իրավիճակներում կիրառելուն՝ աստիճանաբար նվազագույնի հասցնելով աջակցությունը եւ խթանելով ինքնուրույնությունը (*«Ուսուցչի օգնականի ձեռնարկ»* մեթոդական ձեռնարկ, Սվաջան Ա.Հ., Ադամյան Հ.Ա.):

շարունակությունը՝ էջ 7



Պետական չափորոշիչ

Ժամանակակից ուսուցչի մանկավարժական մասնագիտական կոմպետենտությունը

Մեծահասակների կրթության հիմնական խնդիրն այսօր կոմպետենտ մարդկանց պատրաստումն է. ովքեր կկարողանան կիրառել իրենց գիտելիքները փոփոխվող պայմաններում, եւ որոնց հիմնական կարողունակությունը կլինի իրենց կյանքի ընթացքում շարունակական ինքնակրթության մեջ ներգրավվելու կարողությունը:

Մ. Նոուլզ

ՀՀ Հանրակրթության պետական նոր չափորոշչում պահանջվում են սովորողի մոտ զարգացնել եւ ձեւավորել 8 հիմնական կարողունակություններ (կոմպետենցիաներ).

1. լեզվական գրագիտություն
2. սովորել սովորելու
3. ինքնաճանաչողական եւ սոցիալական
4. ժողովրդավարական եւ քաղաքացիական
5. թվային եւ մեդիա
6. մշակութային
7. մաթեմատիկական եւ գիտատեխնիկական
8. տնտեսական կարողունակություն:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության եւ դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների եւ դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձեւերն են: Կարողունակությունները ձեւավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաեւ ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով եւ բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Որպեսզի սովորողի մոտ ուսումնառության ընթացքում եւ առօրյա գործունեության մեջ զարգանան ու գործածվեն վերոնշյալ կարողունակությունները, անհրաժեշտ է, որ ուսուցիչը ունենա մանկավարժական մասնագիտական կոմպետենտություն:

Կրթության ժամանակակից համակարգում ուսուցչի անքակտելի որակը պետք է լինի նրա մասնագիտական կոմպետենտությունը: Վլադիմիր Դալի (1801-1872) հոգեբանական բառարանում մանկավարժական մասնագիտական կոմպետենտությունը սահմանվում է որպես *«ուսուցչի՝ անհրաժեշտ քանակությամբ գիտելիքների, հմտությունների եւ կարողությունների տիրապետում, որոնք ձեւավորում են նրա մանկավարժական գործունեությունը, մանկավարժական հաղորդակցությունը եւ ուսուցչի անհատականությունը, որպես որոշակի արժեքների, իդեալների եւ մանկավարժական գիտակցության կրող»:*

Կրթության ժամանակակից միտումներին համապատասխան մանկավարժական կարողունակությունները ներառում են հետեւյալը.

- Ինքնակրթություն,
- Բարելավել ունեցած հմտությունները եւ վերապատրաստվել,
- Արագ գնահատել իրավիճակը եւ դրա հնարավորությունները,
- Որոշումներ կայացնել եւ պատասխանատվություն կրել դրանց համար,
- Հարմարվել փոփոխվող կենսապայմաններին եւ աշխատանքային պայմաններին,
- Մշակել աշխատելու նոր եղանակներ կամ վերափոխել հինը՝ դրանք օպտիմալացնելու համար:

Կարողունակությունների ձեւավորման առաջին քայլերը, ըստ մասնագետների, *«կյանքի հմտություններ»* (անձնական խնդիրներից, սթրեսից գլուխ հանել, ժամանակը կառավարել, նորմերին եւ կանոններին հետեւել, գործնական փաստաթղթեր կազմել) եւ *«վերառարկայական»* հմտություններե (մշակել եւ համակարգել տեքստը եւ թվային տեղեկատվությունը, ելույթ ունենալ, իրականացնել գործնական հաղորդակցություն, լինել նախաձեռնող, առաջարկել ոչ ստանդարտ լուծում, կարողանալ փաստերով պաշտպանել սեփական տեսակետը) սովորեցնելն է:

Այդ կարողունակությունների ձեւավորումը տեղի է ունենում տեսական մակարդակում, սակայն դրանց մեծ մասը ձեւավորվում է գործնականում:

Կարողունակությունների վրա հիմնված կրթության մեջ մտնելը ներառում է մի շարք հետեւողական գործողություններ՝ կրթական գործընթացի բոլոր սուբեկտների եւ, առաջին հերթին, ուսուցիչների կողմից: Ինչ մեթոդների եւ տեխնոլոգիաների պետք է տիրապետի ժամանակակից ուսուցիչը, որպեսզի սովորողների մոտ զարգացնի՝ պատասխանատվությունը իր վրա վերցնելու, համատեղ որոշումների կայացմանը մասնակցելու, փորձից օգուտ քաղելու, բնական եւ սոցիալական երեւույթների նկատմամբ քննադատական մտածողություն դրսեւորելու, համացանցի տեղեկատվության լայն դաշտում կողմնորոշվելու այսինքն՝ սովորողի մոտ ձեւավորի առանցքային կոմպետենցիաները: Ի՞նչ մասնագիտական եւ մանկավարժական կարողություններ պետք է ունենա ուսուցիչն ինքը՝ սեփական մասնագիտական առաջընթացն ու զարգացումն ապահովելու համար: Ի՝նչ պայմաններում կարողունակությունները կվերածվեն մասնագիտական կոմպետենտության մակարդակ: Մասնագիտական կոմպետենտության սահմանման եւ կարողունակության հասկացության հետ հարաբերակցության խնդիրը վերջերս քննարկման առարկա է դարձել գիտամանկավարժական միջավայրում: Փորձենք հասկանալ այս հարցը:

Ընդհանուր իմաստով՝ *«կոմպետենտություն»* նշանակում է գործունեության համապատասխան ոլորտներում որոշակի տեսակի առաջադրանք կատարելիս պահանջներին, սահմանված չափանիշներին եւ չափորոշիչներին համապատասխանությունը, անհրաժեշտ գիտելիքներ ունենալը, վստահ արդյունքների հասնելու եւ իրավիճակը տիրապետելու կարողությունը: *«Կոմպետենտություն»* հասկացությունն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում 60-ականներին՝ գործող կրթության համատեքստում, որի նպատակն էր՝ պատրաստել մասնագետներ, ովքեր կարող էին հաջողությամբ մրցակցել աշխատաշուկայում: Աշխատանքային գործունեության կազմակերպման ժամանակակից մոտեցման տեսանկյունից կոմպետենտ մասնագետը (ներառյալ ուսուցիչը) պետք է տարբերվի քննադատական մտածողությամբ, այսինքն ունենա՝ տարբեր լուծումների մեջ օպտիմալը ընտրելու ունակություն, տեղեկատվության հետ աշխատելու ունակություն, կանխատեսող եւ վերլուծական հմտություններ՝ մասնագիտական խնդիրները *«այստեղ եւ հիմա»* հաջողությամբ լուծելու համար:

Ելնելով ժամանակակից պահանջներից՝ կարելի է ներկայացնել ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացման հիմնական ուղիները.

- Աշխատանք եւ համագործակցություն մեթոդական միավորումներում,
- Հետազոտական գործունեություն,
- Նորարարական գործունեություն,
- Մանկավարժական նոր մեթոդների զարգացում,
- Մանկավարժական աջակցության տարբեր ձեւեր,
- Մանկավարժական մրցույթներին եւ փառատոներին ակտիվ մասնակցություն,
- Սեփական մանկավարժական փորձի տարածում,
- ՏՀՏ-ի օգտագործում եւ այլն:

Սակայն թվարկված մեթոդներից եւ ոչ մեկը արդյունավետ չի լինի, եթե ուսուցիչն ինքը չի գիտակցում սեփական մասնագիտական կոմպետենտությունը բարելավելու անհրաժեշտությունը: Այստեղ առաջանում է մոտիվացիայի անհրաժեշտությունը եւ մանկավարժական աճի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում ուսուցիչը ինքնուրույն գիտակցում է սեփական մասնագիտական որակների մակարդակը բարելավելու անհրաժեշտությունը: Սեփական մանկավարժական փորձի վերլուծությունն ակտիվացնում է ուսուցչի մասնագիտական ինքնազարգացումը, որի արդյունքում զարգանում են հետազոտական հմտություններ, որոնք հետո ինտեգրվում են մանկավարժական գործունեությանը:

Մասնագիտական կոմպետենտության ձեւավորման փուլերը.

- ինքնավերլուծություն եւ կարիքի գիտակցում,
- ինքնազարգացման պլանավորում (նպատակներ, խնդիրներ, լուծումներ),
- ինքնադրսեւորում, վերլուծություն, ինքնաուղղում:

Տեղեկատվական հասարակությանն անցնելու համատեքստում ավելանում են ուսուցչի մասնագիտական պատրաստվածության պահանջները, հատկապես նրա տեղեկատվական կոմպետենտության մակարդակին: Տեղեկատվական կոմպետենտությունը, որպես ուսուցչի մասնագիտական կարողունակության անբաժանելի մաս, որոշում է նրա մասնագիտական գործունեության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են.

- էլեկտրոնային ձեւով ներկայացված տեղեկատվության հետ աշխատելու հմտությունների տիրապետում,
- ժամանակակից տեղեկատվական զանգվածներում տեղեկատվության որոնման եւ պահպանման ռացիոնալ մեթոդների կիրառման իմացություն եւ կարողություն,
- համացանցում տեղեկատվություն ներկայացնելու ունակություն.
- հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի եւ արտադասարանական գործունեության կազմակերպման եւ անցկացման հմտությունների տիրապետում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու ունակություն,
- տվյալ առարկայի վերաբերյալ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման հմտությունների տիրապետում՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները:

Սեփական աշխատանքի արդյունավետության եւ այն գնահատելու կարողության ձեռքբերումը բնութագրում է ուսուցչի մասնագիտական կարողությունը:

Ուսուցչի աշխատանքում արդյունավետությունը սաների եւ հենց ուսուցչի մտավոր զարգացման մեջ որակական փոփոխությունների (դրական, առաջադեմ եւ բացասական) առկայությունն է:

Արդյունավետությունը արդյունքի համապատասխանությունն է առաջադրանքներին:

Արդյունավետությունը պլանավորված դրական արդյունքների ձեռքբերումն է:

Արիդա ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմության ուսուցչի աշխատանքը հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ

սկիզբը՝ էջ 6

Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնում ուսուցման նոր ռազմավարության՝ համատեղ դասավանդման կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն եւ գնահատում):

Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել եւ ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաեւ թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում (Նույն տեղում:):

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում, 2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում, 3. Զուգահեռ դասավանդում, 4. Այլընտրանքային դասավանդում, 5. Թիմային դասավանդում (Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք:):

Կարեւոր է իմանալ՝ համատեղ դասավանդման հիմնական նպատակը բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնառության որակի ապահովումն է նույն դասարանում:

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Հաջող ներառման իրականացման համար, առանց յուրահատուկ մոտեցումների ու դասավանդման բազմազան մեթոդների իմացության, ուսուցիչները չեն կարող կյանքի կոչել որակյալ կրթությունը բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտների հետ:

Դպրոցում պատմության դասավանդումը պետք է նպաստի աշակերտի արժեքային կողմնորոշումների ձեւավորմանը, բարոյական խնդիրների լուծմանը: Այս առումով պատմական դաստիարակության նպատակն է կենտրոնանալ հիմնականում համամարդկային արժեքների, հումանիզմի կրթության վրա:

Պետք է միշտ հիշել, որ սովորողների կարողությունների, հմտությունների զարգացմանն ու կրթական գործընթացի բարելավմանը նպաստում է սերտ համագործակցությունը դպրոցի հետ առնչվող բոլոր օղակների միջեւ՝ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետներ (*«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի 17.1 հոդված), ծնողներ, սովորողներ:

Ուսումնական հաստատությունը պետք է լինի այն միջավայրը, որտեղ բազմազանության, հավասարության, հանդուրժողականության գաղափարախոսության ընդունումը կնպաստի բոլոր սովորողների կրթության արդյունավետ կազմակերպմանը, դասապրոցեսին եւ դպրոցում կազմակերպված միջոցառումներին նրանց ակտիվ մասնակցությանը եւ կնախապատրաստի նրանց հետագա կյանքին:

Ուստի, ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Սուսաննա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Երեւանի Գարեգին Նժդեհի անվան
հ. 161 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Ձեռներեցություն»* (360 դասաժամ) առարկայի դասավանդող մանկավարժի թափուր տեղի համար:

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք առարկային (մոդուլին) եւ մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաեւ 1-3 գործնական հարցեր եւ կարող է առանձին տրվել մինչեւ հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

- ինքնակենսագրություն

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին,*** *«Երեւանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 35-81-25, (099) 11-05-51 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Ֆիզիկական կուլտուրա առարկայի մասնագետ»*՝ տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 1008 ժամ, *«Սննդի տեխնոլոգ»* (Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա մասնագիտության առարկաները դասավանդելու համար) տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը 1062 ժամ, *«Ձկնաբույծ»*՝ տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը 1400 ժամ, *«Տնտեսագետ»*՝ տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը 492 ժամ դասախոսի թափուր տեղերի համար:

Դասախոսի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. դիմում,

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն,

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** *Արարատի պետական քոլեջում,* հասցեն՝ ք. Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ *«Խոհարարական գործ»* մասնագիտությամբ վարպետի թափուր տեղի համար:

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անձը Հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Ձեւ 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցեն՝ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղ., Հերացու 21:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236) 4-44-17 հեռախոսահամարով:

Արցախ

Մասնագիտական տոնի առթիվ

Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում է կազմակերպվել Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի դահլիճում:

Երեկոն մեկնարկել է 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակին հարգանքի տուրքով: Արցախյան գոյամարտին զինվորագրվածների շարքում քիչ չեն մանկավարժները: Ցավոք, նրանցից շատերն իրենց սաների հետ վերջին դասն անցկացրել են... մարտադաշտում:

Ուսուցիչների ազգօգուտ աշխատանքը բարձր է գնահատել ԱՀ ԿԳՄՍ նախարար **Անահիտ Հակոբյանը:** Շնորհավորանքի իր խոսքում նա նշել է, որ մեր դժվարին ժամանակներում, հավատարիմ իրենց առաքելությանը, ուժերի գերլարումով են մանկավարժները կատարում իրենց աշխատանքը: *«Ձեր անսպառ կորովի ու անմնացորդ նվիրումի շնորհիվ կդիմակայենք մեր առջեւ ծառացած մարտահրավերներին՝ ի շահ մեր հայրենիքի»,*- ասել է նախարարը:

ԱՀ պետնախարար **Արտակ Բեգլարյանը,** շնորհավորելով ուսուցիչներին՝ մասնագիտական տոնի առթիվ, արժեւորել է նրանց անուրանալի ավանդը պետականակերտման գործում: *«Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեր վաստակի, անխոնջ ծառայության ու անսասան հավատի համար: Կառավարությունն առաջիկայում առավել մեծ ուշադրություն կդարձնի ուսուցիչներին հուզող եւ կրթական ոլորտում առկա խնդիրներին: Ձեր շարունակական ինքնակատարելագործման շնորհիվ կկարողանանք ժամանակի ընթացքում հաղթահարել դժվարությունները»,*- ընդգծել է Ա. Բեգլարյանը:

Երեկոյին երաժշտական կատարումներով ուսուցիչներին շնորհավորել են Ստեփանակերտի արվեստի եւ Կոմիտասի անվան երաժշտական դպրոցների, Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի սաները:

Ուսուցչի օրվա առթիվ՝ ԱՀ նախագահի հրամանագրով պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների են արժանացել ոլորտի մի խումբ երախտավորներ:

Բերք ու բարիքի տաղավարներով

Սուրբ Թարգմանչաց Վարդապետաց տոնը մեծաթիվ ուխտավորների ներկայությամբ նշվել է Մարտունու շրջանի Կաղարծի գյուղի Սուրբ Թարգմանչաց եկեղեցում: Մատուցվել է սուրբ եւ անմահ պատարագ:

Ուխտավորների շարքում էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ **Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը,** Մարտունու շրջվարչակազմի ղեկավար **Էդիկ Ավանեսյանը:**

Թեմական առաջնորդը, դիմելով ներկաներին, նշել է. *«Եկել ենք Սուրբ Վարդապետների բարեխոսությունը խնդրելու,մեղքերից ազատվելու եւ իմաստնության շնորհը ստանալու: Աստծո ճանապարհով ընթանալով մեր փնտրածը կգտնենք եւ մեր առջեւ կբացվեն արքայության դռները»:* Անդրադառնալով տոնի խորհրդին նա ընդգծել է. *«Ազգի հարատեւման համար պայքարած անձինք կոչվեցին առաջին եւ երկրորդ լուսավորիչներ: Հայ թարգմանիչները գալիս են լրացնելու այդ սրբազան շարքը՝ որպես լուսավորիչ թարգմանիչներ: Նրանք կատարեցին աստվածային խոսքը հասկանալի եւ լսելի դարձնելու գործը եւ հայությանը հայալեզու պահելու սրբազան առաքելության ճանապարհին ոչինչ չխնայեցին: Մաշտոցը մեր ազգին տվեց իմաստնության բանալին: Նրա ստեղծած 36 զինվորները պահում են մեր ինքնությունն ու հավատքն առ Աստված»,*- նշել է Վրթանես եպիսկոպոսը:

Պատարագին հնչեց միասնական աղոթք՝ հայրենիքի համար նահատակվածների, եկեղեցու հովանու ներքո հանգչած հոգորոր հայրերի եւ նվիրյալների հոգու խաղաղության համար:

Տոնի առթիվ՝ Մարտունու շրջանի Սպիտակաշեն, Ննգի, Գիշի, Խնուշինակ, Մուշկապատ, Հաղորտի, Կաղարծի, Պառավաքումբ համայնքները ներկայացել են գյուղական բերք ու բարիքի տաղավարներով:

Օրն ավարտվեց Մարտունու *«Քնար»* ժողգործիքների համույթի համերգով եւ արվեստի դպրոցի սաների ասմունքով:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ
մեր սեփական թղթակից

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում»* (662 ժամ) մոդուլի (դասընթացի բնույթին համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտակ կրթություն որակավորմամբ) դասախոսի թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- դիմում (Ձեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 4-ին՝ ժամը 16:00-ին,*** *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աբարբեկյան 156:

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Ջրոսաշրջություն»* մասնագիտության դասախոսի թափուր տեղի համար:

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պեք է ներկայացնի հետեւյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- անձնագիր կամ նույնականացման քարտ (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել հանրային ծառայության համարանիշ կամ կամ անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք).

- կրթության վերաբերյալ փաստաթուղթ (դիպլոմ).

- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).

- արական սեռի անձիք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչայինտեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տղեկանք:

Կրթությունը՝ բարձրագույն:

Որակավորումը՝ համապատասխան մասնագիտության:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2022թ. նոյեմբերի 1-ը ներառյալ:***

Մրցույթը տեղի կունենա ***2022թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 11:00-ին,*** Երեւանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Ա. Տիգրանյան 21:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 20-05-24, (010) 20-06-18 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Արմավիր քաղաքի Մովսես Սիլիկյանի անվան հ. 6 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Մովսես Սիլիկյանի անվան հ. 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արմավիր, Շահումյան 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 00-79-19 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Հովտունի տարրական դպրոց»* ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (5 դասաժամ), անգլերենի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 12:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Հովտունի տարրական դպրոցում, հասցեն՝ գ. Հովտուն, 1-ին փ., օբ. 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 62-94-53 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի Ա. Մարգարյանի անվան հ. 29 ավագ հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (1 դրույք) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի Ա. Մարգարյանի անվան հ. 29 ավագ հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Սարյան 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 58-32-70 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Արթիկի հ. 5 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հ. 5 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արթիկ, Շինարարաների 11:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 59-50-21 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի *«Շուռնուխի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), կենսաբանության (բնագիտության, 5,75 դասաժամ), քիմիայի (3,5 դասաժամ), աշխարհագրության (3,5 դասաժամ), ինֆորմատիկայի (2,25 դասաժամ), ռուսաց լեզվի (8,75 դասաժամ), անգլերենի (6,25 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), երաժշտության (0,75 դասաժամ), կերպարվեստի (0,75 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0284) 6-83-50, (094) 66-64-45 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի հ. 180 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (12 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի հ. 180 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ավան-Առինջ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 61-12-00 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Արմավիրի հ. 10 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), ինֆորմատիկայի (8 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (10 դասաժամ), մաթեմատիկայի (28 դասաժամ), կերպարվեստի (11 դասաժամ), հայոց լեզվի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի հ. 10 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արմավիր, Սայաթ-Նովա 2/10:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Արտաշատ քաղաքի հ. 4 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի գրականության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի հ. 4 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արտաշատ, Մարքսի 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0235) 2-57-08, (093) 74-00-39 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Բերդի հ. 4 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մայրենիի (6 դասաժամ), հասարակագիտության (3 դասաժամ), իմ հայրենիքը առարկայի (2 դասաժամ), ֆիզկուլտուրայի (11 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 19-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Բերդի հ. 4 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Բերդ, Ն. Ստեփանյան 13:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 31-61-98 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 46 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի պատմության (23 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:30-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի հ. 46 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Մանանդյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44-53-01 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Ավշարի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի հասարակագիտության (12 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ), ֆիզկուլտուրայի (3 դասաժամ), պատմության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

